ՀԱՐՑԱՇԱՐ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարց 1. Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրություններն անցկացվում են՝
Պատասխան՝ ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

(ՀՀ Սահմանադրություն, 7-րդ հոդված)

Հարց 2. Ազգային ժողովի ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեն՝
Պատասխան՝ Ազգային ժողովի ընտրության օրը տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիները:

(ՀՀ Սահմանադրություն, 48-րդ հոդված, մաս 1)

Հարց 3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝
Պատասխան՝ անկախ պետական մարմին է:

(ՀՀ Սահմանադրություն, 194-րդ հոդված, մաս 1)

Հարց 4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում՝
Պատասխան՝ Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, հանրաքվեների օրինականության նկատմամբ:

(ՀՀ Սահմանադրություն, 194-րդ հոդված, մաս 1)

Հարց 5. Ընտրական հանձնաժողովների համակարգը, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են՝
Պատասխան՝ Ընտրական օրենսգրքով:

(ՀՀ Սահմանադրություն, 194-րդ հոդված, մաս 4)

Հարց 6. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմված է՝
Պատասխան՝ յոթ անդամից:

(ՀՀ Սահմանադրություն, 195-րդ հոդված, մաս 1)

Հարց 7. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում՝
Պատասխան՝ չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ:

(ՀՀ Սահմանադրություն, 195-րդ հոդված, մաս 5)

«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ

Հարց 8. Հանրաքվեն անցկացվում է՝
Պատասխան՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:
(«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենք, 2-րդ հոդված, մաս 4)

Հարց 9. Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն՝
Պատասխան՝ հանրաքվեի օրը 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները:
(«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենք, 3-րդ հոդված, մաս 1)

Հարց 10. Հանրաքվեի է դրվում՝
Պատասխան՝ Սահմանադրության նախագիծը:
(«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենք, 4-րդ հոդված, մաս 1)

Հարց 11. Հանրաքվեի է դրվում՝
Պատասխան՝ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը:
(«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենք, 4-րդ հոդված, մաս 1)

Հարց 12. Հանրաքվե չի կարող անցկացվել՝
Պատասխան՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ անկախ ռազմական կամ արտակարգ դրությունն ընդգրկող տարածքի չափից:
(«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենք, 6-րդ հոդված, մաս 1)

Հարց 13. Հանրաքվե չի կարող անցկացվել՝
Պատասխան՝ Ազգային ժողովի ընտրությունների օրը:
(«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենք, 6-րդ հոդված, մաս 1)

Հարց 14. Հանրաքվեի դրված ակտն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել՝
Պատասխան՝ հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների 1/4-ը:
(«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենք, 35-րդ հոդված, մաս 2)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՐԳԵՐԸ

Հարց 15. Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորվում է ընտրական հանձնաժողովների՝
Պատասխան՝ եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

(Ընտրական օրենսգիրք, 36-րդ հոդված, մաս 1)

Հարց 16. Ո՞ր հանձնաժողովներն են գործում մշտական հիմունքներով՝
Պատասխան՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները:

(Ընտրական օրենսգիրք, 39-րդ հոդված, մաս 4, 52-րդ հոդված, մաս 1)

Հարց 17. Մշտական հիմունքներով գործող հանձնաժողով չի հանդիսանում՝
Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովը:

(Ընտրական օրենսգիրք, 39-րդ հոդված, մաս 4, 52-րդ հոդված, մաս 1)

Հարց 18. Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են՝
Պատասխան՝ համամասնական ընտրակարգով:

(Ընտրական օրենսգիրք, 77-րդ հոդված)

Հարց 19. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են՝
Պատասխան՝ մեծամասնական կամ համամասնական ընտրակարգով:

(Ընտրական օրենսգիրք, 104.1-րդ հոդված, մաս 1)

Հարց 20. Մինչև 4000 ընտրող ունեցող համայնքի ավագանու ընտրություններին՝
Պատասխան՝ տպագրվում է մեկ քվեաթերթիկ, որում նշվում են ընտրություններին մասնակցող թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը՝ այբբենական հերթականությամբ:

(Ընտրական օրենսգիրք, 104.1-րդ հոդված, մաս 4, 117-րդ հոդված)

Հարց 21. Համամասնական ընտրակարգով ընտրություններին՝
Պատասխան՝ տպագրվում են ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի համար միևնույն չափերի առանձին քվեաթերթիկներ:

(Ընտրական օրենսգիրք, 94-րդ հոդված, մաս 1, 140-րդ հոդված, մաս 1)

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

Հարց 22. Ո՞վ չունի ընտրելու իրավունք՝
Պատասխան՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված և դիտավորությամբ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

(Ընտրական օրենսգիրք, 2-րդ հոդված, մաս 4)

Հարց 23. Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է՝
Պատասխան՝ լիազոր մարմինը՝ բնակչության պետական ռեգիստրը վարող ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը:

(Ընտրական օրենսգիրք, 8-րդ հոդված, մաս 7,
9-րդ հոդված, մաս 2)

Հարց 24. Զորամասերում կազմվող ընտրողների ցուցակները՝
Պատասխան՝ հրապարակման ենթակա չեն, դրանցից քաղվածքներ չեն կատարվում:

(Ընտրական օրենսգիրք, 8-րդ հոդված, մաս 12)

Հարց 25. Ընտրելու իրավունք ունեցող անձն ընդգրկվում է ընտրողների ցուցակում՝
Պատասխան՝ եթե քվեարկության օրվան նախորդող 6 ամսվա ընթացքում ունեցել է անձը հաստատող վավեր փաստաթուղթ:

(Ընտրական օրենսգիրք, 10-րդ հոդված, մաս 1)

Հարց 26. Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողները լիազոր մարմին կարող են դիմում ներկայացնել՝
Պատասխան՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և իրենց նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին:

(Ընտրական օրենսգիրք, 10-րդ հոդված, մաս 3.1)

Հարց 27. Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողներն իրենց նախընտրած վայրի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումը լիազոր մարմին կարող են ներկայացնել՝
Պատասխան՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն, նշելով մատչելի ընտրական տեղամասի համարը:

(Ընտրական օրենսգիրք, 10-րդ հոդված, մաս 3.1)

Հարց 28. Տեղաշարժման դժվարություններ ունեցող ընտրողների համար մատչելի ընտրական տեղամասերի ցանկը հրապարակում է՝
Պատասխան՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

(Ընտրական օրենսգիրք, 10-րդ հոդված, մաս 3.1)

Հարց 29. Իրենց տեղամասային կենտրոնում քվեարկելու անհնարինության դեպքում տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողները կարո՞ղ են քվեարկել այլ տեղամասում՝

Պատասխան՝ այո, եթե սահմանված կարգով դիմում են ներկայացրել լիազոր մարմին՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և իրենց նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին:

(Ընտրական օրենսգիրք, 10-րդ հոդված, մաս 3.1)

Հարց 30. Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները և մասնագետները՝
Պատասխան՝ կարող են ընդգրկվել այն ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, որտեղ նշանակված են:

(Ընտրական օրենսգիրք, 10-րդ հոդված, մաս 4)

Հարց 31. Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները և մասնագետները ո՞ր ընտրությունների ժամանակ կարող են ընդգրկվել համապատասխան ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում՝
Պատասխան՝ Ազգային ժողովի ընտրությունների, ինչպես նաև համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ:

(Ընտրական օրենսգիրք, 10-րդ հոդված, մաս 4)

Հարց 32. Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներին և մասնագետներին ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակներում ընդգրկելու մասին դիմումը լիազոր մարմին կարող է ներկայացվել՝
Պատասխան՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն:

(Ընտրական օրենսգիրք, 10-րդ հոդված, մաս 4)

Հարց 33. Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների՝ ՝ ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումը ո՞վ կարող է ներկայացնել լիազոր մարմին՝
Պատասխան՝ իրենց նշանակող կուսակցության կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից:

(Ընտրական օրենսգիրք, 10-րդ հոդված, մաս 4)

Հարց 34. Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները և մասնագետները կարող են ընդգրկվել իրենց՝ ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում՝
Պատասխան՝ իրենց դիմումի հիման վրա:

(Ընտրական օրենսգիրք, 10-րդ հոդված, մաս 4)

Հարց 35. Տեղամասի ընտրողների ցուցակում համարակալման շարունակականությամբ առանձին բաժնում ներառվում է՝
Պատասխան՝ նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասում ընդգրկված ընտրողների ցուցակը:

(Ընտրական օրենսգիրք, 11-րդ հոդված, մաս 1)

Հարց 36. Էլեկտրոնային եղանակով չեն կազմվում և տեղամասային ընտրական հանձնաժողովներին տրամադրվող տեխնիկական սարքավորման մեջ չեն ներբեռնվում՝
Պատասխան՝ ձերբակալված անձանց պահելու վայրում, քրեակատարողական հիմնարկում կազմվող ընտրողների ցուցակները:

(Ընտրական օրենսգիրք, 11-րդ հոդված, մաս 7)

Հարց 37. Զորամասում հաշվառված ընտրողների ցուցակները տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից բացվում են միայն՝
Պատասխան՝ քվեարկության օրը, այն պահին, երբ ընտրական տեղամաս են այցելում զորամասի ցուցակում ընդգրկված ընտրողները:

(Ընտրական օրենսգիրք, 12-րդ հոդված, մաս 4)

Հարց 38. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն ընտրողների ցուցակը փակցնում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում՝
Պատասխան՝ քվեարկության օրվանից 2 օր առաջ:

(Ընտրական օրենսգիրք, 13-րդ հոդված, մաս 4)

Հարց 39. Ընտրողների ցուցակները տեղամասային կենտրոնում մնում են փակցված՝
Պատասխան՝ մինչև քվեարկությանը հաջորդող յոթերորդ օրը:

(Ընտրական օրենսգիրք, 13-րդ հոդված, մաս 4)

Հարց 40. Ո՞րտեղ են փակցվում զորամասում հաշվառված ընտրողների ցուցակները՝
Պատասխան՝ զորամասում՝ զինծառայողների համար տեսանելի տեղում:

(Ընտրական օրենսգիրք, 13-րդ հոդված, մաս 5)

Հարց 41. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակները, բացառությամբ՝ Ընտրական օրենսգրքով նախատեսված ցուցակների՝
Պատասխան՝ հրապարակվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

(Ընտրական օրենսգիրք, 13-րդ հոդված, մաս 7)

Հարց 42. Քվեարկության օրն ընտրողների լրացուցիչ ցուցակը կազմելու համար հիմք համարվող փաստաթղթեր են՝
Պատասխան՝ լիազոր մարմնի տեղեկանքը կամ դատական ակտը:

(Ընտրական օրենսգիրք, 15-րդ հոդված, մաս 3)

Հարց 43. Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովում կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընտրողին ընդգրկելու համար հիմք համարվող փաստաթղթերը կցվում են՝
Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմվող լրացուցիչ ցուցակին:

(Ընտրական օրենսգիրք, 15-րդ հոդված, մաս 3)

Հարց 44. Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակի յուրաքանչյուր էջ ստորագրվում և կնքվում է՝
Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից:

(Ընտրական օրենսգիրք, 15-րդ հոդված, մաս 5)

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՆԻՍՏԵՐԸ: ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարց 45. Քանի՞ անդամ ունի տեղամասային ընտրական հանձնաժողովը՝
Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովն ունի առնվազն 7 անդամ:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 1)

Հարց 46. Ովքե՞ր են նշանակում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին՝
Պատասխան՝ Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) և համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 2)

Հարց 47. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակվում են՝
Պատասխան՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նշանակած անդամներից, բացառությամբ Ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերի:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 4)

Հարց 48. Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են՝
Պատասխան՝ քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 6)

Հարց 49. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են՝
Պատասխան՝ քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 20, և ոչ ուշ, քան 18 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 6)

Հարց 50. Ե՞րբ է հրավիրվում տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը՝
Պատասխան՝ հանձնաժողովի կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12-00-ին:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 7)

Հարց 51. Տեղամասային ընտրական հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրում է՝
Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով:

(Ընտրական օրենսգիրք, 46-րդ հոդված, մաս 3)

Հարց 52. Ընտրական հանձնաժողովի նիստը ե՞րբ է համարվում իրավազոր՝
Պատասխան՝ եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

(Ընտրական օրենսգիրք, 46-րդ հոդված, մաս 4)

Հարց 53. Ընտրական հանձնաժողովի որոշումը ե՞րբ է համարվում ընդունված՝
Պատասխան՝ եթե կողմ են քվեարկել նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին, բացառությամբ՝ Ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերի:

(Ընտրական օրենսգիրք, 46-րդ հոդված, մաս 4)

Հարց 54. Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին հաղորդում են՝
Պատասխան՝ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը:

(Ընտրական օրենսգիրք, 8-րդ հոդված, մաս 9)

Հարց 55. Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովներն ի՞նչ պարբերականությամբ են հաղորդում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին՝
Պատասխան՝ երեքժամյա:

(Ընտրական օրենսգիրք, 8-րդ հոդված, մաս 9)

Հարց 56. Արգելվում է նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը՝
Պատասխան՝ ընտրական հանձնաժողովների անդամներին:

(Ընտրական օրենսգիրք, 23-րդ հոդված, մաս 1)

Հարց 57. Ընտրական հանձնաժողովներն իրենց լիազորություններն իրականացնում են՝
Պատասխան՝ օրինականության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

(Ընտրական օրենսգիրք, 36-րդ հոդված, մաս 5)

Հարց 58. Տեղամասային ընտրական հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ընդունում է՝
Պատասխան՝ անհատական իրավական ակտեր:

(Ընտրական օրենսգիրք, 38-րդ հոդված, մաս 1)

Հարց 59. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը գործում է՝
Պատասխան՝ անկախ և չի ներկայացնում իրեն նշանակողին:

(Ընտրական օրենսգիրք, 39-րդ հոդված, մաս 1)

Հարց 60. Ընտրական հանձնաժողովների անդամները՝

Պատասխան՝ ազատվում են վարժական հավաքից և զինվորական վարժանքից:

(Ընտրական օրենսգիրք, 39-րդ հոդված, մաս 2)

Հարց 61. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակահատվածում տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները՝

Պատասխան՝ ենթակա են պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ընտրության ավարտից հետո:

(Ընտրական օրենսգիրք, 39-րդ հոդված, մաս 2)

Հարց 62. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամն իր լիազորությունների իրականացման նպատակով՝

Պատասխան՝ սեփական նախաձեռնությամբ ազատվում է ծառայողական (աշխատանքային) պարտականությունները կատարելուց:

(Ընտրական օրենսգիրք, 39-րդ հոդված, մաս 9)

Հարց 63. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները հանձնաժողովի առաջին նիստում՝

Պատասխան՝ ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի իրավունքների և պարտականությունների ծանոթացման տեքստը:

(Ընտրական օրենսգիրք, 39-րդ հոդված, մաս 11)

Հարց 64. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, հանձնաժողովի քարտուղարին կամ անդամին վարձատրություն չի տրվում՝

Պատասխան՝ եթե նա չի ստորագրել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունները, կամ եթե նրա լիազորությունները վաղաժամկետ դադարել են:

(Ընտրական օրենսգիրք, 40-րդ հոդված, մաս 3)

Հարց 65. Ո՞վքեր չեն կարող լինել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ.

Պատասխան՝ Ազգային ժողովի պատգամավորները, նախարարները և նրանց տեղակալները, համայնքների ղեկավարները, ավագանու անդամները, մարզպետները և նրանց տեղակալները, դատավորները, դատախազները, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, ոստիկանությունում, ազգային անվտանգության, հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական, պրոբացիայի, փրկարար ծառայություններում ծառայողները, զինծառայողները, վստահված անձինք, կուսակցության, թեկնածուի լիազոր ներկայացուցիչները, դիտորդները, թեկնածուները:

(Ընտրական օրենսգիրք, 41-րդ հոդված, մաս 2)

Հարց 66. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել՝

Պատասխան՝ ընտրական իրավունք ունեցող և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական ունեցող ՀՀ քաղաքացիները:

(Ընտրական օրենսգիրք, 41-րդ հոդված, մաս 3)

Հարց 67. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի համար՝

Պատասխան՝ կարող են սահմանվել որակավորման ավելի բարձր չափանիշներ, քան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար:

(Ընտրական օրենսգիրք, 41-րդ հոդված, մաս 3)

Հարց 68. Ընտրական հանձնաժողովի կազմում ընդգրկվելուց հետո հանձնաժողովի անդամների համար կազմակերպված գործնական դասընթացներին մասնակցությունը՝
Պատասխան՝ պարտադիր է:

(Ընտրական օրենսգիրք, 41-րդ հոդված, մաս 8)

Հարց 69. Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները դադարում են՝
Պատասխան՝ ընտրության ավարտից հետո՝ համապատասխան ընտրական հանձնաժողովի կողմից ընտրության արդյունքներն ամփոփվելուց 7 օր հետո, բացառությամբ Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացվելու դեպքի:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 11)

Հարց 70. Ընտրական տեղամասում վերաքվեարկություն նշանակվելու դեպքում՝
Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարած:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 13)

Հարց 71. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարած՝
Պատասխան՝ առանձին ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 13)

Հարց 72. Ո՞ր դեպքում կարող են պաշտոնանկ արվել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը՝
Պատասխան՝ եթե քվեարկության նախորդ օրը կամ քվեարկության օրը ցուցաբերում են ակնհայտ անգործություն:

(Ընտրական օրենսգիրք, 45-րդ հոդված, մաս 5)

Հարց 73. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը կարող են պաշտոնանկ արվել՝
Պատասխան՝ հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:

(Ընտրական օրենսգիրք, 45-րդ հոդված, մաս 5)

Հարց 74. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարը կամ հանձնաժողովի անդամն ինքնաբացարկի դիմում կարող են ներկայացնել՝
Պատասխան՝ մինչև քվեարկության օրվան նախորդող հինգերորդ օրվա ժամը 18.00-ն:

(Ընտրական օրենսգիրք, 45-րդ հոդված, մաս 6)

Հարց 75. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունի՝

Պատասխան՝ համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը:

(Ընտրական օրենսգիրք, 48-րդ հոդված, մաս 12)

Հարց 76. Ե՞րբ կարող է ներկայացվել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում՝

Պատասխան՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

(Ընտրական օրենսգիրք, 50-րդ հոդված, մաս 1)

Հարց 77. Դիմողի՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկից հրաժարվելը՝

Պատասխան՝ հիմք չէ վերահաշվարկ չիրականացնելու համար:

(Ընտրական օրենսգիրք, 50-րդ հոդված, մաս 9)

Հարց 78. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի կողմից Ընտրական օրենսգրքի պահանջները խախտելու դեպքում՝

Պատասխան՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու համապատասխան որակավորման վկայական ստացած անձի որակավորման վկայականը:

(Ընտրական օրենսգիրք, 51-րդ հոդված, մաս 2)

Հարց 79. Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներին և ստուգարքին մասնակցելու իրավունք չունեն՝

Պատասխան՝ այն անձինք, որոնց՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած է ճանաչվել դասընթացների անցկացմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում:

(Ընտրական օրենսգիրք, 41-րդ հոդված, մաս 5)

Հարց 80. Դասընթացների, ստուգարքի ընթացքին կարող են հետևել՝

Պատասխան՝ զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

(Ընտրական օրենսգիրք, 41-րդ հոդված, մաս 5)

Հարց 81. Նշվածներից ո՞րն է տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորություն՝

Պատասխան՝ կազմում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն, կազմակերպում է ընտրությունների և հանրաքվեների քվեարկությունը, ամփոփում քվեարկության արդյունքներն ընտրական տեղամասում:

(Ընտրական օրենսգիրք, 53-րդ հոդված)

Հարց 82. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը նշվածներից ո՞ր վիճակահանությանը չեն մասնակցում՝

Պատասխան՝ հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման:

(Ընտրական օրենսգիրք, 64-րդ հոդված, մաս 1)

Հարց 83. Իրավունք ունի՞ արդյոք տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը սահմանափակելու քվեարկության սենյակում միաժամանակ գտնվող ընտրողների թիվը՝
Պատասխան՝ այո, եթե քվեարկության սենյակում գտնվող ընտրողների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարվում է քվեարկության բնականոն ընթացքը:

(Ընտրական օրենսգիրք, 65-րդ հոդված, մաս 5)

Հարց 84. Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամը վերցնում է քվեարկության կտրոնը, այնուհետև՝
Պատասխան՝ ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողն ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում, հանձնաժողովի անդամն իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 8)

Հարց 85. Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը՝
Պատասխան՝ ընտրողից վերցնելով քվեարկության կտրոնը:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 8)

Հարց 86. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝
Պատասխան՝ պարտավոր է ստորագրել քվեարկության արդյունքների արձանագրությունները:

(Ընտրական օրենսգիրք, 71-րդ հոդված, մաս 3)

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻՆ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՄԱՍՆԱԳԵՏԸ

Հարց 87. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներից և քվեարկողներից բացի, ովքե՞ր կարող են ներկա գտնվել քվեարկության սենյակում՝
Պատասխան՝ վստահված անձինք, դիտորդները, վերադաս ընտրական հանձնաժողովների անդամները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները, այցելուները:

(Ընտրական օրենսգիրք, 8-րդ հոդված, մաս 11)

Հարց 88. Վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները՝
Պատասխան՝ կարող են լուսանկարել, տեսանկարահանել ընտրական հանձնաժողովների նիստերը, այդ թվում՝ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստը:

(Ընտրական օրենսգիրք, 8-րդ հոդված, մաս 11)

Հարց 89. Ովքե՞ր են համարվում այցելուներ՝

Պատասխան՝ ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների և այլ պետությունների ընտրական մարմինների ներկայացուցիչները:

(Ընտրական օրենսգիրք, 30-րդ հոդված, մաս 4 և 5)

Հարց 90. Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը՝

Պատասխան՝ դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, վստահված անձը կարող են հեռացվել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ քվեարկության սենյակից:

(Ընտրական օրենսգիրք, 31-րդ հոդված, մաս 5և 8, 34-րդ հոդված, մաս 4)

Հարց 91. Քվեարկության օրը քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք իրավունք ունեն ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից, բացառությամբ՝

Պատասխան՝ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների:

(Ընտրական օրենսգիրք, 32-րդ հոդված, մաս 1,
34-րդ հոդված, մաս 1)

Հարց 92. Վստահված անձը և դիտորդն իրավունք չունեն՝

Պատասխան՝ միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին, ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ, միջամտելու քվեարկության ընթացքին:

(Ընտրական օրենսգիրք, 32-րդ հոդված, մաս 3,
34-րդ հոդված, մաս 2)

Հարց 93. Դիտորդը, այցելուն, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն իրավունք չունեն՝

Պատասխան՝ ցուցումներ տալ ընտրական հանձնաժողովի անդամներին:

(Ընտրական օրենսգիրք, 32-րդ հոդված, մաս 3)

Հարց 94. Քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք քվեարկության ընթացքում՝ քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար՝

Պատասխան՝ պարտավոր են գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

(Ընտրական օրենսգիրք, 32-րդ հոդված, մաս 4,
34-րդ հոդված, մաս 3)

Հարց 95. Վստահված անձն իրավունք ունի՝

Պատասխան՝ խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու հանձնաժողովի նիստերին, քվեարկության ընթացքում ներկա գտնվելու քվեարկության սենյակում, ընտրական հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ հանձնաժողովի նախագահին ներկայացնելու դիտարկումներ և առաջարկություններ:

(Ընտրական օրենսգիրք, 34-րդ հոդված, մաս 1)

Հարց 96. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ ընտրական հանձնաժողովի նիստին և քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում կարող են ներկա գտնվել՝
Պատասխան՝ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի յուրաքանչյուր թեկնածուի մեկ վստահված անձ:

(Ընտրական օրենսգիրք, 34-րդ հոդված, մաս 3)

Հարց 97. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրական հանձնաժողովի նիստին և քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում կարող են ներկա գտնվել ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի՝
Պատասխան՝ մինչև երկու վստահված անձ:

(Ընտրական օրենսգիրք, 34-րդ հոդված, մաս 3)

Հարց 98. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ քվեարկության սենյակում կարող է ներկա գտնվել ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի՝
Պատասխան՝ միայն մեկ վստահված անձ:

(Ընտրական օրենսգիրք, 34-րդ հոդված, մաս 3)

Հարց 99. Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները՝
Պատասխան՝ չեն կարող ունենալ վստահված անձ:

(Ընտրական օրենսգիրք, 34-րդ հոդված, մաս 3)

Հարց 100. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստերին հանձնաժողովի անդամների մասնակցության, ինչպես նաև նիստերին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայության մասին նշում կատարվում է՝
Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

(Ընտրական օրենսգիրք, 46-րդ հոդված, մաս 7)

Հարց 101. Ընտրական հանձնաժողովների անդամները հանձնաժողովների նիստերին, քվեարկության օրը քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք, մասնագետը՝
Պատասխան՝ վերնազգեստի վրա պարտադիր կարգով տեսանելի ձևով կրում են ներկա գտնվելու իրավունքը հավաստող վկայական:

(Ընտրական օրենսգիրք, 46-րդ հոդված, մաս 8)

Հարց 102. Ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում ովքե՞ր կարող են ներկա գտնվել՝
Պատասխան՝ յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև 2 դիտորդ՝ թարգմանչի ուղեկցությամբ, յուրաքանչյուր զանգվածային լրատվության միջոցը ներկայացնող մեկ լրագրող և մեկ լուսանկարիչ կամ տեսաձայնագրման մեկ օպերատոր, տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից երկու դիտորդ, իսկ համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններից միասնական՝ երկու դիտորդ:

(Ընտրական օրենսգիրք, 65-րդ հոդված, մաս 6)

Հարց 103. Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը համարում են, որ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարվել է Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, ապա՝
Պատասխան՝ իրավունք ունեն պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

(Ընտրական օրենսգիրք, 67-րդ հոդված, մաս 14)

Հարց 104. Եթե քվեարկության նախապատրաստման ընթացքում կատարվել է Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, ապա ո՞վ իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի գրանցամատյանում՝
Պատասխան՝ դիտորդը, վստահված անձը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը:

(Ընտրական օրենսգիրք, 67-րդ հոդված, մաս 14)

Հարց 105. Մասնագետի ժամանակավոր բացակայության դեպքում ո՞վ կարող է նրան փոխարինել՝
Պատասխան՝ հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ հանձնաժողովի այլ անդամ:

(Ընտրական օրենսգիրք, 65-րդ հոդված, մաս 2)

Հարց 106. Քվեարկության արդյունքների արձանագրությունը ովքե՞ր կարող են լուսանկարել կամ տեսանկարահանել.
Պատասխան՝ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք:

(Ընտրական օրենսգիրք, 71-րդ հոդված, մաս 8)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐ: ԿԱՀԱՎՈՐՈՒՄ

Հարց 107. Տեսախցիկների տեսադաշտում պետք է լինեն՝
Պատասխան՝ քվեատուփը, ընտրողների գրանցման, քվեարկության ծրարների ու քվեաթերթիկների հատկացման և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացները:

(Ընտրական օրենսգիրք, 8-րդ հոդված, մաս 11.1)

Հարց 108. Ե՞րբ է ավարտվում քվեարկության սենյակի կահավորումը՝
Պատասխան՝ քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն:

(Ընտրական օրենսգիրք, 57-րդ հոդված, մաս 3)

Հարց 109. Քվեարկության համար հատկացվում են խցիկներ՝
Պատասխան՝ յուրաքանչյուր 600 ընտրողի հաշվարկով առնվազն մեկ խցիկ:

(Ընտրական օրենսգիրք, 58-րդ հոդված, մաս 1)

Հարց 110. Տեղամասային կենտրոնում միմյանցից ի՞նչ հեռավորությամբ են տեղադրվում քվեարկության խցիկները՝
Պատասխան՝ միմյանցից առնվազն 1 մետր հեռավորությամբ:
(Ընտրական օրենսգիրք, 58-րդ հոդված, մաս 3)

Հարց 111. Տեղամասային կենտրոնում ինչպե՞ս են տեղադրվում քվեարկության խցիկները՝
Պատասխան՝ այն դիրքով, որ ընտրողը քվեարկելիս լինի հանձնաժողովին դեմքով, և բացառվի թիկունքում մարդկանց տեղաշարժը, ինչպես նաև ընտրողի ազատ կամքի արտահայտման նկատմամբ վերահսկողության ցանկացած հնարավորություն:
(Ընտրական օրենսգիրք, 58-րդ հոդված, մաս 3)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ: ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հարց 112. Ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում և միաժամանակյա համացանցային հեռարձակում իրականացվում է՝
Պատասխան՝ Ազգային ժողովի ընտրությունների, ինչպես նաև համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ:
(Ընտրական օրենսգիրք, 8-րդ հոդված, մաս 11.1)

Հարց 113. Տեսանկարահանումը և համացանցային հեռարձակումը պետք է իրականացվեն՝
Պատասխան՝ քվեարկության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ:
(Ընտրական օրենսգիրք, 8-րդ հոդված, մաս 11.1)

Հարց 114. Ե՞րբ և ինչպե՞ս է իրականացվում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխումը՝
Պատասխան՝ քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին՝ վիճակահանությամբ:
(Ընտրական օրենսգիրք, 64-րդ հոդված, մաս 1)

Հարց 115. Քվեարկությունը սկսվելուց առաջ մասնագետը տեխնիկական սարքավորման միջոցով տպում է՝
Պատասխան՝ տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք:
(Ընտրական օրենսգիրք, 64-րդ հոդված, մաս 2)

Հարց 116. Մինչև քվեարկության սկսվելը տպված՝ տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը՝
Պատասխան՝ սոսնձվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:
(Ընտրական օրենսգիրք, 64-րդ հոդված, մաս 2)

Հարց 117. Զինծառայողները քվեարկում են՝
Պատասխան՝ տեղամասային կենտրոնում:
(Ընտրական օրենսգիրք, 65-րդ հոդված, մաս 4)

Հարց 118. Ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ է համարվում՝

Պատասխան՝ նույնականացման քարտը, կենսաչափական անձնագիրը, ոչ կենսաչափական անձնագիրը, անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 1)

Հարց 119. Մասնագետը ստուգում է ընտրողի ինքնությունը՝
Պատասխան՝ ներկայացված փաստաթղթում առկա լուսանկարի միջոցով:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 2)

Հարց 120. Ընտրողը քվեարկությանը մասնակցում է՝
Պատասխան՝ անձամբ:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 2)

Հարց 121. Ո՞ր դեպքում է էկրանին հայտնվում դեղին նշան՝
Պատասխան՝ եթե ընտրողը գրանցված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 5)

Հարց 122. Ո՞ր դեպքում է էկրանին հայտնվում կարմիր նշան՝
Պատասխան՝ եթե ընտրողն իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 6)

Հարց 123. Ընտրողի գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողների ցուցակի համապատասխան սյունակում և քվեարկության կտրոնի վրա դնում է՝
Պատասխան՝ իր անհատական կնիքը:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 8)

Հարց 124. Ընտրողը քվեաթերթիկը լրացնում կամ քվեաթերթիկներից մեկն ընտրում է՝
Պատասխան՝ գաղտնի՝ քվեարկության խցիկում:

(Ընտրական օրենսգիրք, 6-րդ հոդված, 67-րդ հոդված, մաս 2)

Հարց 125. Ընտրողի կողմից կատարած քվեարկության մասին որևէ ձևով տեղեկանալը՝
Պատասխան՝ արգելվում է:

(Ընտրական օրենսգիրք, 67-րդ հոդված, մաս 6)

Հարց 126. Ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամը քվեարկության ծրարը քվեատուփի մեջ գցելու հնարավորություն է ընձեռում միայն՝
Պատասխան՝ ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին ինքնասոսնձվող դրոշմանիշը փակցնելուց հետո:

(Ընտրական օրենսգիրք, 67-րդ հոդված, մաս 7)

Հարց 127. Մինչև ինքնասոսնձվող դրոշմանիշը քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին փակցնելը, ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամն ընտրողից պետք է ստանա՝

Պատասխան՝ քվեարկության կտրոնը:

(Ընտրական օրենսգիրք, 67-րդ հոդված, մաս 7)

Հարց 128. Ի՞նչ կարգով է փակցվում ինքնասոսնձվող դրոշմանիշը՝
Պատասխան՝ քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամն առանց քվեարկության ծրարն ընտրողից վերցնելու քվեարկության ծրարի կտրվածքի միջով ինքնասոսնձվող դրոշմանիշը փակցնում է քվեաթերթիկին:

(Ընտրական օրենսգիրք, 67-րդ հոդված, մաս 7)

ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԴԵՊՔԵՐ

Հարց 129. Քրեակատարողական հիմնարկներում տեղամասային կենտրոններ կազմավորվում են՝
Պատասխան՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ:

(Ընտրական օրենսգիրք, 17-րդ հոդված, մաս 4)

Հարց 130. Դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին տեղամասային կենտրոնից դուրս հրավիրելու դեպքում՝
Պատասխան՝ գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում՝ նշելով պատ-ճառները:

(Ընտրական օրենսգիրք, 32-րդ հոդված, մաս 5)

Հարց 131. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչվելու դեպքում՝
Պատասխան՝ նյութերն ուղարկվում են դատախազություն:

(Ընտրական օրենսգիրք, 48-րդ հոդված, մաս 14)

Հարց 132. Շրջիկ արկղով քվեարկությունն անցկացվում է՝
Պատասխան՝ քվեարկության գաղտնիության պահպանմամբ:

(Ընտրական օրենսգիրք, 56-րդ հոդված, մաս 2)

Հարց 133. Ձերբակալված ընտրողները՝
Պատասխան՝ քվեարկությանը մասնակցում են շրջիկ արկղի միջոցով:

(Ընտրական օրենսգիրք, 63-րդ հոդված, մաս 1)

Հարց 134. Քվեարկության բնականոն ընթացքի վտանգման դեպքում տեղամասային կենտրոն զենքով մուտք գործել կարող են միայն՝
Պատասխան՝ ոստիկանության ծառայողները՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:

(Ընտրական օրենսգիրք, 65-րդ հոդված, մաս 4)

Հարց 135. Ընտրողի անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը՝
Պատասխան՝ հիմք չէ նրան քվեարկության չթողնելու համար, բացառությամբ այն դեպքի, երբ տեխնիկական սարքավորումում առկա տեղեկություններից պարզվում է, որ ընտրողն ունի այլ՝ վավերականության ժամկետը չլրացած, անձը հաստատող փաստաթուղթ:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 2)

Հարց 136. Եթե ընտրողը ներկայացրել է այլ անձի անձը հաստատող փաստաթուղթ, ապա՝
Պատասխան՝ մասնագետն այդ մասին տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին, ով քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 2)

Հարց 137. Ե՞րբ է ընտրողների գրանցումն իրականացվում առանց տեխնիկական սարքավորման կիրառման՝
Պատասխան՝ տեխնիկական սարքավորման խափանման կամ չլինելու պարագայում, քրեակատարողական հիմնարկում քվեարկության ժամանակ, շրջիկ արկղով քվեարկության ժամանակ:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 9)

Հարց 138. Ո՞ր դեպքում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը լրացնում համարակալված կտրոնը՝
Պատասխան՝ քրեակատարողական հիմնարկում քվեարկության ժամանակ, շրջիկ արկղով քվեարկության ժամանակ, տեխնիկական սարքավորման խափանման կամ չլինելու պարագայում:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 10)

Հարց 139. Եթե ընտրողը չի ներկայացնում քվեարկության կտրոն, ապա հանձնաժողովի համապատասխան անդամը՝
Պատասխան՝ տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որն ընտրողից վերցնում է քվեարկության ծրարը, անհապաղ մարում է՝ առանց պարունակությունը ստուգելու:

(Ընտրական օրենսգիրք, 67-րդ հոդված, մաս 7)

Հարց 140. Ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի՝
Պատասխան՝ ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, այցելու:

(Ընտրական օրենսգիրք, 67-րդ հոդված, մաս 9)

Հարց 141. Ընտրողի գործողությունները քվեաթերթիկը սխալ լրացնելու կամ վնասելու դեպքում՝
Պատասխան՝ դիմում է հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ (քվեաթերթիկներ) ստանալու համար:

(Ընտրական օրենսգիրք, 67-րդ հոդված, մաս 10)

Հարց 142. Ընտրական հանձնաժողովի անդամի գործողություններն ընտրողի կողմից քվեաթերթիկը սխալ լրացնելու կամ վնասելու դեպքում՝

Պատասխան՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացնում է նոր քվեաթերթիկ (քվեաթերթիկներ):

(Ընտրական օրենսգիրք, 67-րդ հոդված, մաս 10)

Հարց 143. Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկները՝
Պատասխան՝ անհապաղ մարվում են:

(Ընտրական օրենսգիրք, 67-րդ հոդված, մաս 10)

Հարց 144. Միևնույն անձն ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող քանի՞ ընտրողի կարող է օգնել՝
Պատասխան՝ միայն մեկ:

(Ընտրական օրենսգիրք, 67-րդ հոդված, մաս 9)

Հարց 145. Ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնող անձի տվյալները գրառվում են՝
Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

(Ընտրական օրենսգիրք, 67-րդ հոդված, մաս 9)

Հարց 146. Քվեարկության ծրարի մեջ մեկից ավելի քվեաթերթիկներ գտնվելու դեպքում՝
Պատասխան՝ հաշվարկում ընդգրկվում է միայն ինքնասոսնձվող դրոշմանիշով քվեաթերթիկը:

(Ընտրական օրենսգիրք, 68-րդ հոդված, մաս 6)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ: ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ: ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Հարց 147. Քվեարկության ավարտից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակի վերջում նշում է՝
Պատասխան՝ լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը:

(Ընտրական օրենսգիրք, 15-րդ հոդված, մաս 5)

Հարց 148. Ո՞վ է իրականացնում վերահաշվարկի աշխատանքները.
Պատասխան՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

(Ընտրական օրենսգիրք, 50-րդ հոդված)

Հարց 149. Քվեարկության ավարտից՝ 20:00-ից հետո ու՞մ մուտքն է արգելվում քվեարկության սենյակ՝
Պատասխան՝ ընտրողների:

(Ընտրական օրենսգիրք, 68-րդ հոդված, մաս 1)

Հարց 150. Տեղամասային ընտրական հանձնաժողովը նշվածներից ո՞ր գործողությունն է կատարում քվեարկության արդյունքների ամփոփման նիստում՝ ժամը 20.00-ից մինչև քվեատուփը բացելը՝
Պատասխան՝ փաթեթավորում է հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, փաթեթը կնքում է և տեղավորում ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման

պարկում, ընտրողների ցուցակում ընտրողների ստորագրությունների հիման վրա հաշվում է քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը, հաշվում է չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերը, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկում, առանձին-առանձին հաշվում է ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորման միջոցով տպված և համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթները կնքում և տեղադրում է ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկում, առանց հաշվելու փաթեթավորում է չօգտագործված քվեաթերթիկները:

(Ընտրական օրենսգիրք, 68-րդ հոդված, մաս 2)

Հարց 151. Քվեարկությունն ավարտվելուց հետո տեխնիկական սարքավորման միջոցով տպվող տեղեկանքն ո՞վ է ստորագրում, կնքում և տեղադրում ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկում՝

Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

(Ընտրական օրենսգիրք, 68-րդ հոդված, մաս 2)

Հարց 152. Քվեաթերթիկի վավերության վերաբերյալ առարկության դեպքում քվեարկության է դրվում՝

Պատասխան՝ առարկություն ներկայացրած հանձնաժողովի անդամի առաջարկությունը:

(Ընտրական օրենսգիրք, 68-րդ հոդված, մաս 3)

Հարց 153. Քվեարկության արդյունքներն ամփոփելիս ի՞նչ գործողություն է կատարում տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության ծրարի վրա ավելորդ գրառում լինելու դեպքում՝

Պատասխան՝ քվեաթերթիկը ծրարից չի հանվում, քվեարկության ծրարը դրանում գտնվող քվեաթերթիկի հետ անհապաղ մարվում է:

(Ընտրական օրենսգիրք, 68-րդ հոդված, մաս 6)

Հարց 154. Քվեարկության արդյունքներն ամփոփելիս չսահմանված նմուշի քվեաթերթիկները՝

Պատասխան՝ հաշվի չեն առնվում և չեն հաշվարկվում:

(Ընտրական օրենսգիրք, 68-րդ հոդված, մաս 7)

Հարց 155. Միաժամանակ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովն առաջին հերթին ամփոփում է՝

Պատասխան՝ համայնքի ավագանու ընտրության քվեարկության արդյունքները:

(Ընտրական օրենսգիրք, 68-րդ հոդված, մաս 9)

Հարց 156. Համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների դեպքում ո՞ր քվեաթերթիկն է անվավեր՝

Պատասխան՝ եթե ներառում է որևէ գրառում կամ նշում:

(Ընտրական օրենսգիրք, 69-րդ հոդված, մաս 1)

Հարց 157. Մեծամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում քվեաթերթիկն անվավեր է, եթե՝

Պատասխան՝ բացի քվեարկության համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կամ դրան նմանվող նշանից, ներառում է ավելորդ գրառում, ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը, մեկից ավելի թեկնածուի օգտին նշումներ է ներառում, որևէ նշում չի ներառում:

(Ընտրական օրենսգիրք, 69-րդ հոդված, մաս 2)

Հարց 158. Ո՞ր քվեաթերթիկն է համարվում սահմանված նմուշի քվեաթերթիկ՝
Պատասխան՝ ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված նմուշի այն քվեաթերթիկը, որը հանվել է ծրարից և որի վրա փակցված է այդ ընտրական տեղամասի ինքնասոսնձվող դրոշմանիշը:

(Ընտրական օրենսգիրք, 70-րդ հոդված)

Հարց 159. Ի՞նչ տեղեկություններ են նշված ինքնասոսնձվող դրոշմանիշի վրա՝
Պատասխան՝ ընտրության անվանման հապավումը, քվեարկության ամսաթիվը և ընտրական տեղամասի համարը:

(Ընտրական օրենսգիրք, 59-րդ հոդված, մաս 3)

Հարց 160. Ընտրական տեղամասում ընտրողների ընդհանուր թիվը հավասար է՝
Պատասխան՝ լրացուցիչ ցուցակների ընտրողների և ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողների թվերի գումարին:

(Ընտրական օրենսգիրք, 71-րդ հոդված, մաս 1)

Հարց 161. Նշվածներից ո՞ր տվյալը չի հաշվվում և չի նշվում ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունում՝
Պատասխան՝ չսահմանված նմուշի քվեաթերթիկների թիվը:

(Ընտրական օրենսգիրք, 71-րդ հոդված, մաս 1)

Հարց 162. Նշվածներից ո՞ր տվյալը չի հաշվվում և չի նշվում ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունում՝
Պատասխան՝ օգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերի թիվը:

(Ընտրական օրենսգիրք, 71-րդ հոդված, մաս 1)

Հարց 163. Քվեարկության ավարտից հետո՝ մինչև ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն կազմելը, տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը՝
Պատասխան՝ չի կարող ընդհատվել:

(Ընտրական օրենսգիրք, 71-րդ հոդված, մաս 4)

Հարց 164. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության կազմումն ավարտվում է նիստի վերջում, բայց ոչ ուշ քան՝
Պատասխան՝ քվեարկության ավարտից 12 ժամ հետո:

(Ընտրական օրենսգիրք, 71-րդ հոդված, մաս 5)

Հարց 165. Քանի՞ օրինակից է կազմվում ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունը՝

Պատասխան՝ չորս օրինակից:

(Ընտրական օրենսգիրք, 71-րդ հոդված, մաս 6)

Հարց 166. Ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը սահմանված կարգով փակելու համար պատասխանատու է՝
Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

(Ընտրական օրենսգիրք, 71-րդ հոդված, մաս 7)

Հարց 167. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածքը տրվում է՝
Պատասխան՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

(Ընտրական օրենսգիրք, 71-րդ հոդված, մաս 8)

Հարց 168. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը մեկանգամյա օգտագործման պարկերը և մյուս ընտրական պարագաները քվեարկության ավարտից հետո՝
Պատասխան՝ ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում, ներկայացնում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

(Ընտրական օրենսգիրք, 71-րդ հոդված, մաս 9)

Հարց 169. Քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանցից ո՞ւմ կարող է ուղեկցել թարգմանիչ՝
Պատասխան՝ այցելուին և միջազգային դիտորդին:

(Ընտրական օրենսգիրք, 30-րդ հոդված, մաս 6,
65-րդ հոդված, մաս 6)

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Հարց 170. Քվեարկության նախորդ օրը չհրկիզվող պահարանում տեղադրվում են՝
Պատասխան՝ ինքնասոսնձվող դրոշմանիշերը, համարակալված կտրոնները, տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները:

(ԿԸՀ 19.01.2026 թ. N 11-Ն որոշում, Հավելված, կետ 4)

Հարց 171. Չհրկիզվող պահարանի փակման մասում սոսնձված թղթի վրա ստորագրում են՝
Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը. հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս կարող են ստորագրել սոսնձված թղթի վրա:

(ԿԸՀ 19.01.2026 թ. N 11-Ն որոշում, Հավելված, կետ 7)

Հարց 172. Ընտրական փաստաթղթերի պահպանման համար նախատեսված չհրկիզվող պահարանը քվեարկության նախորդ օրը ոստիկանության ծառայողներին պահպանության հանձնելու և քվեարկության օրը ոստիկանության ծառայողներից ընդունելու վերաբերյալ՝

Պատասխան՝ կազմվում է արձանագրություն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

(ԿԸՀ 19.01.2026 թ. N 11-Ն որոշում, Հավելված, կետ 8)

Հարց 173. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կամ վերջինիս հանձնարարությամբ հանձնաժողովի քարտուղարը ե՞րբ են բացում շրջիկ արկղը՝
Պատասխան՝ ոչ ուշ, քան մինչև ժամը 20.00-ն:

(ԿԸՀ 09.11.2016 թ. N 129-Ն որոշում, Հավելված, կետ 20)

Հարց 174. Շրջիկ արկղի միջոցով քվեարկության կազմակերպման ժամանակը որոշում և հայտարարում է՝
Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

(ԿԸՀ 09.11.2016 թ. N 129-Ն որոշում, Հավելված, կետ 5)

Հարց 175. Ո՞րտեղ են գումարվում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստերը՝
Պատասխան՝ տեղամասային կենտրոնում:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 36-Ն որոշում, Հավելված, կետ 6)

Հարց 176. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում ո՞վ է փոխարինում նրան՝
Պատասխան՝ հանձնաժողովի քարտուղարը:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 36-Ն որոշում, Հավելված, կետ 19, ենթակետ 1)

Հարց 177. Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը՝
Պատասխան՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ գրառումներ է կատարում գրանցամատյանում:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 36-Ն որոշում, Հավելված, կետ 19, ենթակետ 5)

Հարց 178. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստում հանձնաժողովի անդամը քվեարկում է՝
Պատասխան՝ կողմ կամ դեմ:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 36-Ն որոշում, Հավելված, կետ 38)

Հարց 179. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է՝
Պատասխան՝ մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին և կատարել իր լիազորությունները, մասնակցել ընտրական հանձնաժողովի անդամների համար կազմակերպվող մասնագիտական դասընթացներին:

(Ընտրական օրենսգիրք, 39-րդ հոդված, մաս 10,
ԿԸՀ 28.03.2025 թ. N 36-Ն որոշում, Հավելված,
կետ 22, ենթակետ 2, 3)

Հարց 180. Կալանավորված անձանց և դատապարտյալների քվեարկությունը կազմակերպվում և անցկացվում է՝
Պատասխան՝ քրեակատարողական հիմնարկում կազմավորված տեղամասային կենտրոնում:
(ԿԸՀ 09.11.2016 թ. N 128-Ն որոշում, Հավելված, կետ 2)

Հարց 181. Տեսողության պատճառով քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողները՝
Պատասխան՝ իրավունք ունեն ընտրողների ցուցակում ստորագրելու համար օգտագործել իրենց անձնական ֆաքսիմելային ստորագրությունները:
(ԿԸՀ 22.11.2016 թ. N 136-Ն որոշում, կետ 1)

Հարց 182. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարն առձեռն ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացնում՝
Պատասխան՝ ընտրողների ցուցակների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեաթերթիկները, չսահմանված նմուշի քվեաթերթիկների փաթեթը, արձանագրության մեկ քաղվածք, հանձնաժողովի կնիքը, հանձնաժողովի գրանցամատյանը և քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը:
(Ընտրական օրենսգիրք, 71-րդ հոդված, մաս 9,
ԿԸՀ 11.01.2017 թ. N 9-Ն որոշում, Հավելված, կետ 9)

Հարց 183. Ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկի մեջ դրվում են՝
Պատասխան՝ հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկները:
(Ընտրական օրենսգիրք, 68-րդ հոդված, մաս 8,
ԿԸՀ 11.01.2017 թ. N 9-Ն որոշում, Հավելված, կետ 2)

Հարց 184. Ընտրական փաստաթղթերն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում հանձնվում և ընդունվում են՝
Պատասխան՝ հանձնողի ու ընդունողի կողմից ստորագրելու և ստացական տալու միջոցով:
(Ընտրական օրենսգիրք, 54-րդ հոդված, մաս 1,
ԿԸՀ 11.01.2017 թ. N 9-Ն որոշում, Հավելված, կետ 10)

Հարց 185. Հանձնաժողովի նախագահից բացի, ովքե՞ր իրավունք ունեն ստորագրելու հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկների փաթեթների վրա՝
Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք:
(Ընտրական օրենսգիրք, 68-րդ հոդված, մաս 8,
ԿԸՀ 11.01.2017 թ. N 9-Ն որոշում, Հավելված, կետ 5)

Հարց 186. Ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկի մեջ դրվում են՝
Պատասխան՝ հանձնաժողովի անդամների անհատական կնիքները:
(Ընտրական օրենսգիրք, 60-րդ հոդված, մաս 7,
ԿԸՀ 11.01.2017 թ. N 9-Ն որոշում, Հավելված, կետ 2)

Հարց 187. Համամասնական ընտրակարգով ընտրության դեպքում մինչև քվեարկության սկիզբը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը՝

Պատասխան՝ յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի քվեաթերթիկներից երեքից հինգ քվեաթերթիկ գցում է քվեարկության խցիկներում տեղադրված չօգտագործված քվեաթերթիկների արկղի մեջ:

(ԿԸՀ 22.02.2017 թ. N 43-Ն որոշում, կետ 1)

Հարց 188. Քվեարկության խցիկներում տեղադրված արկղից հանված չօգտագործված քվեաթերթիկները՝

Պատասխան՝ առանց հաշվելու, դասավորելու լցվում են այդ նպատակով տրամադրված պարկի մեջ, որը պետք է գտնվի քվեարկության սենյակում:

(ԿԸՀ 22.02.2017 թ. N 43-Ն որոշում, կետ 1)

Հարց 189. Տեղամասային ընտրական հանձնաժողովում անցկացվող վիճակահանությունների արդյունքները գրառվում են՝

Պատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

(ԿԸՀ 11.01.2017 թ. N 7-Ն որոշում, Հավելված, կետ 7)

Հարց 190. Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունների դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են՝

Պատասխան՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:

(ԿԸՀ 21.01.2022թ. N 3-Ն որոշում, Հավելված 1, կետ 3)

Հարց 191. Դիտորդին և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին տրվող վկայականը՝

Պատասխան՝ պարունակում է արագ արձագանքման ծածկագիր (QR կոդ), որը հնարավորություն է տալիս հավաստիանալու տվյալ դիտորդի կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի հավատարմագրված լինելու հարցում:

(ԿԸՀ 21.01.2022թ. N 3-Ն որոշում, Հավելված 1, կետ 30,
ԿԸՀ 27.01.2022թ. N 7-Ն որոշում, Հավելված 1, կետ 11)

Հարց 192. Հավատարմագրված դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների ցանկը՝

Պատասխան՝ հրապարակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

(ԿԸՀ 21.01.2022թ. N 3-Ն որոշում, Հավելված 1, կետ 3,
ԿԸՀ 27.01.2022թ. N 7-Ն որոշում, Հավելված 1, կետ 18)